Հովհաննես Թումանյան

Սիրիուսի հրաժեշտը

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր,
Ո՞ւրկից եկել,
Ո՞ւր ես թեքել,
Ո՞ւր ես ճեպում էդքան հրզոր,

Անճառ թափով,
Անծեր ճամփով,
Դարե՛ր, դարե՛ր հազարավոր:

Սիրիո՛ւս, երկնից շքեղ գոհար,
Որ խաղում ես,

Փաղփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ
Ու զարդարում,
Ջրվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ

Ի՜նչքան աչք են վրրադ հառել,
Նայում են քեզ
Հիմի մեզ պես,

Ի՜նչքան աչք է նայել, մարել,
Եվ կամ ի՜նչքան

Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել:

Ո՞վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,

Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ
Մի օր հատնի,
Մարի, մրթնի
Հրրաժեշտի շողրդ հավետ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրրդ մեր հին.

Եվ թե տեսնես՝
Մեզնից էապես
Մի հարցում տուր հրզոր մահին.
Մարդու քանի՞
Սերունդ կանի

Մի հրրաժեշտն աստեղային:

1922